Հավելված №2
Սահմանված է
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 31-ի N242Ն որոշմամբ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր _____

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԵԿՇՌՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

____ _____ 20__ թվական ք._____

_____
(Բաշխողի անվանումը)

ի դեմս _____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից, և

_____,
(Որակավորված մատակարար ընկերության անվանումը)

այսուհետ՝ Որակավորված մատակարար, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____,
(Որակավորված սպառող ընկերության անվանումը)

այսուհետ՝ Որակավորված սպառող, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պայմանագրում կիրառվող հասկացություններն են՝

1) **Հանձնաժողով՝**	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,
2) **Բաշխող՝**	էլեկտրական էներգիայի բաշխման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
3) **Որակավորված մատակարար՝**	էլեկտրական էներգիան բացի Բաշխողից նաև այլ անձի վաճառելու իրավունք ունեցող՝ Կանոններով սահմանված լիցենզավորված անձ,
4) **Հաղորդող՝**	էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
5) **Համակարգի օպերատոր՝**	էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
6) **Կանոններ ՝**	Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական համակարգում որակավորված սպառողին և որակավորված մատակարարին էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման ցանցեր մուտքի իրավունքի տրամադրման անցումային կանոններ,
7) **Ներկրող՝**	էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
8) **Որակավորված սպառող՝**	էլեկտրական էներգիան բացի Բաշխողից նաև այլ անձից գնելու իրավունք ունեցող կամ սեփական կարիքների համար էլեկտրական էներգիան ներկրող՝ Կանոնների պահանջները բավարարող սպառող,
9) **Բաշխման ծառայություն՝**	Բաշխողի կողմից էլեկտրական էներգիան բաշխելու ծառայություն,
10) **Անհավասարակշռության ծավալ**	Կանոնների համաձայն ամսական կտրվածքով հաշվարկվող էլեկտրական էներգիայի հանրահաշվական գումար,
11) **Հաշվարկային ամիս՝**	ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Սույն պայմանագրի համաձայն Հաշվարկային ամսվա ընթացքում Անհավասարակշռության ծավալի դեպքում Բաշխողը վաճառում, իսկ Որակավորված սպառողը գնում է էլեկտրական էներգիա, կամ Որակավորված մատակարարը վաճառում, իսկ Բաշխողը գնում է էլեկտրական էներգիա՝ սույն պայմանագրի և Կանոնների համաձայն:

3. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Կողմերը պարտավորվում են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոններով, սույն պայմանագրով և Հանձնաժողովի ընդունած այլ իրավական ակտերով:
4. Բաշխողը կամ Որակավորված մատակարարը պարտավորվում են վաճառել էլեկտրական էներգիա՝ Որակավորված սպառողի կողմից Որակավորված մատակարարից գնման ենթակա և փաստացի սպառած էլեկտրական էներգիայի տարբերությունը հաշվեկշռելու համար:
5. Բաշխողը պարտավորվում է գնել Որակավորված մատակարարի վաճառած էլեկտրական էներգիան՝ Որակավորված սպառողի կողմից Որակավորված մատակարարից գնման ենթակա և փաստացի սպառած էլեկտրական էներգիայի տարբերությունը հաշվեկշռելու համար:
6. Որակավորված սպառողը պարտավորվում է գնել Բաշխողի վաճառած էլեկտրական էներգիան՝ իր կողմից Որակավորված մատակարարից գնման ենթակա և փաստացի սպառած էլեկտրական էներգիայի տարբերությունը հաշվեկշռելու համար:

4. ՎԱՃԱՌՔԻ ՍԱԿԱԳԻՆԸ

7. Եթե Կանոնների համաձայն հաշվարկվող Անհավասարակշռության ծավալը, ստացվում է դրական նշանով, ապա Անհավասարակշռության ծավալը վաճառվում է Բաշխողին հետևյալ պայմաններով.
   1) Որակավորված մատակարարից (բացառությամբ Ներկրողի) առաքված էլեկտրական էներգիան՝ համաձայն Բաշխողի կողմից տվյալ Որակավորված մատակարարից ձեռքբերվող էլեկտրական էներգիայի համար Հանձնաժողովի սահմանած սակագներով,
   2) Ներկրված էլեկտրական էներգիան՝ համաձայն Որակավորված սպառողի և Նեկրողի միջև կնքված պայմանագրում ամրագրված էլեկտրական էներգիայի վաճառքի գնով, որը չի կարող գերազանցել տվյալ Հաշվարկային ամսում ներքին շուկայի պահանջարկի

բավարարման համար աշխատող, էլեկտրական էներգիայի հաշվեկշիռը փակող կայանի էլեկտրական էներգիայի սակագնային դրույքը (երկդրույք սակագնային համակարգ) կամ սակագինը (միադրույք սակագնային համակարգ):

8. Եթե Կանոնների համաձայն հաշվարկվող Անհավասարակշռության ծավալը ստացվում է բացասական նշանով, ապա Անհավասարակշռության ծավալը Որակավորված սպառողը գնում է Բաշխողից՝ էլեկտրական էներգիայի բաշխիչ ցանցին միացված լարման համար Հանձնաժողովի սահմանած ցերեկային սակագնով:
9. Եթե Որակավորված սպառողն իր պահանջարկի բավարարման համար էլեկտրական էներգիան ձեռք է բերում մեկից ավելի Որակավորված մատակարարներից, ապա Անհավասարակշռության ծավալը որոշելիս առաջնային ընդունվում են ամենացածր գնով մատակարարվող էլեկտրական էներգիայի քանակները:
10. Հանձնաժողովի կողմից սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Հաշվեկշռող էլեկտրական էներգիայի քանակը հաշվառում է Հաշվարկային կենտրոնը՝ համաձայն Հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվառման կարգի և Կանոնների:
12. Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ հաշվառքի սարքերի տվյալների հիման վրա Հաշվարկային կենտրոնը կազմում է վճարման ակտը՝ Կանոնների համաձայն, և իր ստորագրությամբ ներկայացնում Կողմերի ստորագրմանը մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 11-ը ներառյալ:
13. Կողմերը, սույն պայմանագրի 12-րդ կետում նշված ակտի վերաբերյալ առարկություն չունենալու դեպքում, պարտավոր են ստորագրել այն՝ ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
14. Սույն պայմանագրի 12-րդ կետում նշված ակտը ստորագրելուց հետո, մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 15-ը՝ Բաշխողը իր կողմից վաճառված էլեկտրական էներգիայի մասով կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Որակավորված սպառողին, իսկ Որակավորված մատակարարն իր կողմից էլեկտրական էներգիայի վաճառքի դեպքում կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Բաշխողին:

15. Որակավորված սպառողը Բաշխողից, իսկ Բաշխողը Որակավորված մատակարարից Հաշվարկային ամսվա ընթացքում գնված էլեկտրաէներգիայի դիմաց վճարումը կատարում է սույն պայմանագրի 14-րդ կետում նշված հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

16. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

8. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

17. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:
18. Եթե տարաձայնության առարկան Հաշվարկային կենտրոնի կողմից սույն պայմանագրի 12-րդ կետի համաձայն ներկայացված ակտն է, ապա Հաշվարկային կենտրոնը պարտավոր է, Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում, 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 13-ը ներառյալ, լուծել տարաձայնությունը՝ անհրաժեշտության դեպքում կազմակերպելով քննարկում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
19. Եթե սույն պայմանագրի 18-րդ կետում սահմանված ընթացակարգով և ժամկետներում հնարավոր չէ լուծել տարաձայնությունը, ապա Կողմերը պարտավոր են ստորագրել Հաշվարկային կենտրոնի կողմից վերանայված սույն պայմանագրի 12-րդ կետում նշված ակտը մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 13-ը ներառյալ, իսկ վճարող կողմը պարտավոր է կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Տարաձայնություն ունեցող կողմը պարտավոր է վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ստորագրված ակտին կցել հատուկ կարծիք:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

20. Սույն գլխում Կողմերի կողմից սահմանվող այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, Կանոններին և այլ իրավական ակտերին:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

21. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի և Հաշվարկային կենտրոնի կողմից ստորագրման պահից, իսկ էլեկտրական էներգիայի հաղորդման ցանց օգտագործելու դեպքում Կողմերի, Հաշվարկային կենտրոնի, Հաղորդողի և Համակարգի օպերատորի կողմից ստորագրման պահից, և գործում է մինչև _____:
22. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում: Հանձնաժողովի սահմանած ժամկետում էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման նոր պայմանագիր չկնքելու կամ գործող պայմանագրում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ չկատարելու դեպքում գործում են Հանձնաժողովի կողմից հաստատված պայմանագրի նոր օրինակելի ձևի դրույթները կամ գործող օրինակելի ձևում կատարված փոփոխությունները կամ լրացումները:
23. Սույն պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
24. Սույն պայմանագիրը կազմված է 4 օրինակից՝ մեկական Կողմերի և Հաշվարկային կենտրոնի համար, իսկ էլեկտրական էներգիայի հաղորդման ցանց օգտագործելու դեպքում՝ 6 օրինակից՝ Կողմերի, Հաշվարկային կենտրոնի, Հաղորդողի և Համակարգի օպերատորի համար:

11. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Բաշխող՝	Որակավորված մատակարար՝
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
Հ/h _____	Հ/h _____
Հեռախոս	Հեռախոս
Ֆաքս	Ֆաքս
Գործունեության լիցենզիա N	Գործունեության լիցենզիա N
Ղեկավար	Ղեկավար

_____

Որակավորված սպառող՝
գտնվելու վայրը _____
Հ/h _____
Հեռախոս
Ֆաքս
Ղեկավար

_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)

_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հաշվարկային կենտրոն

_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Համակարգի օպերատոր

_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հաղորդող

_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)